ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ՀԱՆԴԵՍ ԵՆ ԵԿԵԼ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ

26.07.2023 19:00

Այսօր՝ 2023թ. հուլիսի 26-ին, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը և Արցախի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդն անցկացրել են համատեղ նիստ:

Խորհրդակցական ձայնի իրավունքով նիստին մասնակցել են նաև ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտորը, ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը և Արցախի Հանրապետության հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը:

Նիստի ընթացքում քննարկվել է բացառապես Արցախի Հանրապետությունում ստեղծված օրհասական իրավիճակը:

Մասնակիցներն արձանագրել են, որ Արցախի Հանրապետությունը հայտնվել է լիակատար շրջափակման մեջ, ինչի հետևանքով կտրվել է Արցախի կապն արտաքին աշխարհի հետ:

Փաստերի համադրման արդյունքում և միջազգային իրավական կարգավորումների լույսի ներքո **Հայաստանի Հանրապետության Արցախի Հանրապետության փաստաբանների պալատների խորհուրդները հանդես են եկել համատեղ հայտարարությամբ, որում մասնավորապես կոչ են անում.**

- **ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակին**,

- **Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդին,**

- **Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող միջազգային և ներպետական կառույցներին**,

- **Ռուսաստանի Դաշնության փաստաբանների դաշնային պալատին** *(որպես եռակողմ համաձայնագրի մասնակից պետության գործընկեր կառույց),*

- **այլ պետությունների գործընկեր փաստաբանների պալատներին և միություններին՝**

ցուցաբերել գործուն աջակցություն Արցախի

ժողովրդի շրջափակումը վերացնելու և հումանիտար աղետը կանխելու հարցում, այդ թվում՝ դատապարտելով Ադրբեջանի իշխանությունների ցեղասպան քաղաքականությունը:

Հ.Գ. Փաստաբանական կառույցների համատեղ հայտարարության ամբողջական տեքստը կհրապարակվի առաջիկայում:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })